Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացածձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5649
18 APR 2013

...Կ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ
ԲԱԺԻՆ

37
Ք-11

ԾՐԱԳՐԵՐ
Կուսլուսավորության ցանցի ստո-
րին օղակների համար· 1931/32 տարի

# ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
# ԾՐԱԳԻՐ
## (ՔԱՂԱՔԱՅԻՆ)

Թարգմ. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

602
3882-57
3КП1(07)
Թ-40

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

Հանձնարարվող ծրագիրը հաշված է 1 ½–2 ամսվա մշակման համար և նպատակ ունի սպասարկելու թեկնածուների այն մասին, վորը վոչ մի դպրոց չի անցել և չունի բավարար պատրաստականություն, նախնական դպրոց ընդունվելու համար: Այս ծրագիրը հիմնվում է Ինգուլովի «Լենինյան գրագիտություն» գրքի վրա, վորի հետևանքով վերջում գրականություն չի ցույց տրված:

ԹԵՄԱ 1.

## ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Հնգամյակը չորս տարում» լոզունգի իրականացման արդյունքները: Արդյունաբերության և արտադրության այն բնագավառները, վորոնք հնգամյակը կատարել են 3 և 2½ տարում: Սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճումը: Ընթացիկ տարում 518 նոր ձեռնարկների շարք մտնելը, նրանց նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ: Նորակառույցների կարեվոր գիգանտները և նրանց նշանակությունը սոցիալիստական ինդուստրիայի ծավալման գործում: Գյուղատնտեսության բուռն թափով աճող սոցիալիստական սեկտորը· 1040 նոր մեքենա–տրակտորային կայանների շարք մտնելը, 4 հազար սովխոզներ—սոցիալիստական հողագործության առաջատար ուժ: Կոլխոզ շարժման վճռական հաղթանակները՝ համատարած կոլեկտիվացումը ավարտած շրջաններ, համատարած կոլեկտիվացումն այս ընթացիկ տարում, համենայն դեպս վոչ ուշ 1932 թ. գարունքից, ավարտող շրջանները: ՀամԿ(բ)Կ դիրեկտիվները շրջանի կամ նահանգի կոլեկտիվացումը հիմնականում ավարտած լինելու չափանիշի և կոլխոզները կազմակերպչա–տնտեսապես ամրացնելու խնդրի մասին: Կոլխոզային գյուղացիությունը կուսակցության հենարանը գյուղում և հողագործության կենտրոնական դեմք: Ընթացիկ տարում սոցիալիստական եկոնոմիկայի



1 9 AUG 2005
14 NOV 2004

հիմքի ավարտումը: Սոցիալիստական վերակառուցման մեջ ժողովրդական տնտեսության նոր բնագավառների ներգրավումը—կենտկոմի հունիսյան պլենումը, տրանսպորտի և քաղաքային տնտեսության վերակառուցման մասին. բանվոր դասակարգի և կոլխոզնիկների նյութական և կուլտուրական մակարդակի աճումը: Ձեռնարկներում (նամանավանդ նորակառույցներում), սովխոզներում և կոլխոզներում կուլտուր–կենցաղային շինարարության խնդիրները: Մեր դժվարությունները վորպես դասակարգային պայքարի դժվարություններ: Մեր դժվարությունների առանձնահատկությունները— վորպես իրենց մեջ հաղթահարելու հնարավորություններ պարունակող դժվարություններ:

ԹԵՄԱ 2.

## ՄԵՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱԳ ՏԵՄՊԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պրոլետարիատի վերջնական նպատակը—համաշխարհային կոմունիզմ: ԽՍՀՄ–ն համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադ կոմունիզմի համար մղվող պայքարում: Յերկրի ինդուստրացման արագ տեմպեր թելադրող ներքին պայմանները: Ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դերը: Մեր զարգացմանն արագ տեմպեր թելադրող արտաքին պայմանները՝ պայքար մեր անկախության համար, «մենք առաջավոր յերկրներից հետ ենք մնացել 50–100 տարով: Մենք պետք է այդ տարածությունն անցնենք 10 տարում: Կամ մենք այդ կանենք, կամ մեզ կխեղդեն» (Ստալին):

Մեր զարգացման արագ տեմպերի իրացման պայմանները: Այդ իրացման «ոբյեկտիվ» հնարավորությունները՝ յերկրում բնական հարստությունների առկայությունը, բանվորա–գյուղացիական իշխանության գոյությունը, այդ իշխանության ոժանդակությունը բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսայի կողմից,

5679

մեր կադրերի տնտեսական սիստեմի առավելությունները, ամրակուռ և միասնական կուսակցության գոյությունը, վորը բանվոր դասակարգի լավագույն մարդկանց ջանքերն ուղղում է մեկ կետի և հաջողությամբ հաղթահարում դժվարությունները: Այդ «օբյեկտիվ» հնարավորությունների օգտագործման կարողությունը մեր տեմպերի հաղթանակի վճռական պայման: Տեխնիկային, եկոնոմիկային, ֆինանսներին տիրապետելու խնդիրները: Աշխատանքի սոցիալիստական ձևերը ձեռնարկներում, սովխոզներում, կոլխոզներում և նրանց զարգացումը: Պայքար սոցմրցության և հարվածայնության քանակական և վորակական հետագա աճումի համար: Աշխատանքի հերոսները և նրանց դերը յերկրի տնտեսական պլանի իրականացման գործում: Պայքար աշխատանքի ճիշտ կազմակերպման համար (դիմազրկության ամեն տեսակ արտահայտությունների հաղթահարում, գործարքի անցկացում կոլխոզներում, սիստեմատիկ և խիստ հաշվառում): Տնտեսական հաշվարկի վճռական և ամուր անցկացում: Ձեռնարկության աշխատանքների նոր պայմանները և այստեղից բխող ղեկավարության նոր մեթոդները: Ղեկավարության կոնկրետությունն ու օպերատիվականությունը վորպես նրա կարեվոր սկզբունքներ:

## ԹԵՄԱ 3.
## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՒՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԽՍՀՄ պրոլետարիատի սոցիալական շրջապատը՝ գյուղի կուլակները և մանր-բուրժուական շերտերը: Քաղաքի մանր բուրժուազիան: Հոկտեմբերյան հեղափոխությունով քայքայված նախկին սեփականատերերի և նրանց վարձկանների՝ ի դեմս սպասարկու, ռեակցիոն ինտելիգենցիայի, մեզ թշնամի մասնագետների, հոգևորականության և սոցիալ-դավաճանների (մենշևիկների) մնացորդներ: Պրոլետարիատին թշնամի դասա-



կարգային ուժերի դիմադրության սրումը՝ կապված ամբողջ ճակատով ծավալված սոցիալիստական հարձակողականի հետ: Վնասարարությունը վորպես համախմբված հակահեղափոխական ուժերի պայքարի մեթոդ: Ներքին հակահեղափոխական ուժերի համախմբումը համաշխարհային իմպերիալիզմի ուժերի հետ, ինտերվենցիայի նպատակով: «Արդյունաբերական կուսակցությունը», «Աշխատավորական գյուղացիական կուսակցությունը», սոցիալ-վնասարար- մենշևիկները, նրանց սոցիալական բազան և պլատֆորմը (տնտեսական և քաղաքական):

Աջ թեքումը և «ձախությունը» վորպես մեր յերկրի քայքայվող ու մեռնող դասակարգերի դիմադրման արտահայտություն: Տրոցկիզմի հակահեղափոխական բուրժուական հայացքները: Աջ թեքման տնտեսական ծրագիրը և նրա վճռական կետերի զուգադիպումը բուրժուա կալվածատիրական վերականգնման տնտեսական պլատֆորմի հետ: Աջ թեքումը վորպես տվյալ ետապի գլխավոր վտանգ: «Ձախ» խոտորումները վորպես տրոցկիզմի մնացորդների արտահայտություն: «Ձախ» խոտորումները և նրանց օժանդակ դերը աջ թեքման համար: Զարաչահությունը մեր դժվարությունների վրա վորպես աջ և «ձախ» թեքվողների ընդհանուր պրիյոմ: Աջերի և «ձախերի» բլոկը: Հակակուսակցական բլոկների անըսկըզբունքայնությունը: Յերկերեսանիություն: Հաշտվողականություն հանդեպ թեքումների և պայքար դրա դեմ: Տրոցկիզմի և աջ թեքման հայացքների անհամատեղելիությունը կուսակցության շարքերում գտնվելու հետ: Կուսակցության անդամի պարտականությունները՝ ակտիվորեն պայքարել խոսքով և գործով, կուսակցության գլխավոր գծի համար (ընդդեմ թեքումների և ընդդեմ դրանց հանդեպ հաշտվողականության հայտնաբերողների): Ներկա շրջանի սոցիալիստական շինարարության պրակտիկայում աջ և «ձախ» օպորտունիզմի դեմ պայքարի կոնկրետ խնդիրները:

ԹԵՄԱ 4.

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

*«Փոկերը» կամ «լծակները» պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում: Պրոֆմիությունները—մեզ մոտ տիրապետող բանվոր դասակարգի կազմակերպությունը—կոմունիզմի դպրոց: Խորհուրդները—քաղաքի և գյուղի վողջ աշխատավորության մասսայական կազմակերպությունը—պրոլետարիատի դիկտատուրայի ուղղակի արտահայտություն: Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումները խորհուրդների արմատական վերակառուցման մասին: Կոոպերացիա—պրոլետարական դիկտատուրայի պայմաններում նրա սկզբունքային տարբերությունները կապիտալիզմի պայմաններում գտնվող կոոպերացիայից: Սպառկոոպերացիայի վերակառուցման խնդիրները: Կոմյերիտմիությունը—բանվոր և գյուղացի յերիտասարդության մասսայական կազմակերպություն: Կամավոր ընկերությունները: Կուսակցությունը և նրա նշանակությունը, պրոլետարիատի, առանց բացառության, բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքների* համախմբման *և նրանց գործունեությունը մեկ նպատակի—պրոլետարիատին և աշխատավորությանը կապիտալիստական ճորտությունից լրիվ ազատագրելու նպատակի—ուղղությամբ տանելու գործում:*

*Կուսակցության կազմակերպական սկզբունքները՝ դեմոկրատիկ կենտրոնացում, կարգապահություն, միասնություն լենինյան գծից շեղվողների դեմ անհաշտ պայքարի հիման վրա: Բջիջը—կուսակցական կազմակերպության հիմնական ձև:*

*Կուսակցության մարտունակության պայմանները.*

1) *Պրոլետարական ավանգարդի գիտակցությունը, նրա նվիրվածությունը հեղափոխության, կայունություն, անձնազոհություն, հերոսություն:*

2) *Կարողություն կապվելու, «մոտենալու աշխատա-*



*վորական ամենալայն մասսաների հետ, առաջին հերթին պրոլետարական, բայց նույնպես և վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների հետ» (Լենին):*

3) *Պրոլետարական ավանգարդի կենսագործող քաղաքական ղեկավարության ճշտություն:*

*Կուսակցության անդամի պարտականությունները, բխող կուսակցության—վորպես դասակարգային պայքարի զենքի—հատուկ դերից: Կուսակցության անդամի պարտականությունները, ակտիվորեն պայքարել կուսակցության գլխավոր գծի համար: Արտադրության մեջ առաջավորների շարքում լինելը վորպես կուսակցականի առաջին պարտականություն ձեռնարկությունում, սովխոզում և կոլխոզում: Այստեղից բխող, կուսակցականի պարտականությունները՝ իրեն կուլտուրական մակարդակը բարձրացնելու, տեխնիկային տիրապետելու և քաղաքական մակարդակը բարձրացնելու:*

ԹԵՄԱ 5.

## ԿՈՄԻՆՏԵՐՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Հեղափոխության ազգային և ինտերնացիոնալ խնդիրների անքակտելիությունը:*

*Կոմինտերնը—բոլոր յերկիրների պրոլետարիատի՝ իրենց ազատագրման և վողջ աշխատավորության ազատագրման համար՝ պայքարի համաշխարհային շտաբն է:*

*Ցեերք տիպի յերկիրներ և Կոմինտերնի խնդիրները նրանցում: Կ. Ի. Գործկոմի* XI *պլենումի կարևորագույն վորոշումները:*

*ԽՍՀՄ համաշխարհային հեղափոխության հարվածային բրիգադ: ԽՍՀՄ բանվորների և կոմունիստների պարտականությունները մյուս յերկիրների բանվորների և աշխատավորության հանդեպ: Միջազգային իմպերիալիզմի ինտերվենցիոնիստական պլանները և կապիտալիստական յերկիրների բանվորության ու աշխատավորության պարտականությունները Խորհրդային*

684

Միության հանդեպ: Խորհրդային իշխանությունը վորպես ազգային ճնշումներ փշրելու գործիք, վորպես հետամնաց ժողովուրդներին նյութապես և կուլտուրապես բարձրացնելու գործիք: Պայքար յերկու ֆրոնտով ազգային հարցում՝ ընդդեմ վելիկոռուսական շովինիզմի, տեղական նացիոնալիզմի և ընդդեմ նրանց հանդեպ հաշտվողականության: Վելիկոռուսական շովինիզմը վորպես գլխավոր վտանգ: Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումը խորհրդային իշխանության և կուսակցության գծի կատարման, ստուգման մասին ազգային հարցում: Կոմունիստի պարտականությունները ինտերնացիոնալ դաստիարակման գործի ամրացման խնդրում:

ԹԵՄԱ 6·

## ՏԵՂԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Տվյալ ձեռնարկության, կոլխոզի, սովխոզի խնդիրները 1931 թ. ժողովրդական տնտեսության պլանի իրագործման գործում: Ընդհանուր գործարանային (սովխոզային, կոլխոզային) արդֆինպլանի քանակական և վորակական ցուցանիշները: Արդֆինպլանի կատարման դրությունը: Հարվածայնության դրությունը: Վերլուծում տեղում գործող այն ֆակտորների, վորոնք խոչընդոտ են հանդիսանում արդֆինպլանների հաջող կատարմանը: Կուսկազմակերպության առաջապահ դերն արդֆինպլանների կատարման գործում: Կոմունիստի կոնկրետ խնդիրները, արդֆինպլանների կատարման և աշխատանքի սոցիալիստական ձևերի ծավալման պայքարում: Կենցաղի սոցիալիստական վերակառուցումը: Տեղական կուսկազմակերպության կոնկրետ խնդիրները, իրենց շարքերի իդեոլոգիական կայունության և պրակտիկ աշխատանքներում կուսակցության գլխավոր գծի անցկացման համար մղվող պայքարում:

Պետհրատի տպ. Գլավլիտ 6963 (բ), Հրատ № 1902, պ. 5648, տ. 1500

ՀՀ Ազգային գրադարան
NL0184324